

ՀԵՇՈՑՈՒՆԻ ՈՅԱԿԵՐՏՈՏԵՎԸ ԽՈՐՀԴԻՑԵՒՆ ՀԵՆՐԻՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարիատի բայու յերկրների, միացե՛ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՈՎԱՐՈՒԹՅԱՆ ԳԱՐԱՎՈՐ

№ 16

ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ


№ 16

\*\*

ՔՈՅՑՈՒԹՅԱՆ ԱԴՅՈՒՆ

ԱԳԻՏ-ԳԻԵՍ 1 ԳՈՐԾ.

Թարգմ. ԱՄԱ-ԽԱՐԱԶՅԱՆ



8

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԵԼԻՇԵԿԱՆԻ ԽԱՐՀՐԴԻԱԲԻՆ ՀՅՈՒԹԵՎԵՏՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարիատի բալոր յերկրների, միացե՛ք

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ


№ 16

ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

№ 16

\* \*

ԳՈՅՈՒԹՅԱՆ ԿՐԿՈՒ



ԱԳԻՏ-ՊԻԵՍ 1 ԳՈՐԾ.

Թարգմ. ԱՄՈ-ԽԱՐԱԶԱՆ



Ե Խ Ե Վ Ա 1 9 2 4

Թույլատրված ե Գ. Ք. Հ. Ա.

Տիրաժ 500

Փետհրատի առաջին տպարան Աւաղարշապատու

## ԳՈՐԾ · ԱՆՁԻՆՔ

ՅՐԱՌԻ ՀԱԼՄ — բանվորի այլի

ԿԱՐԼ  
ԵՄՄԱ { նըա յերեխաները

ՅՐԱՌԻ ՇՏԱԴԼԵՐ — հարևանուհին

ԴԱՆՆԵՐ — պաստոր

ՀԱՐՑՀԱՌԻԶԵՆ

ՎԱՅՏՄԱՆ — տանտեր

ՇՎԱՐՑ — բանվոր

---

## ՏԵՍԻԼ 1.

Փրառ Հալմի աղքատ, բայց սաքուր կահավորված սենյակ, մուտքը — բեմի խորքից։ Դուան ճախ կողմը վարագույր, վորը փոխարինում է հանդերձի պահարանը։ Չախ պատի կողմը յերկու լուսամուտ, վորոնց վրա բաշված են սպիտակ վարագույրներ։ Անկյունում յերկաթյա վառարան, նրա մոտ հին բազմոց, վորի առաջ դրված են սեղան յեվ յերկու աթոռ։ Աջ պատի կողմը կամոդ, վորի վրա դրված են փոքրիկ արձաններ յեվ լուսանկարներ շրջանակներով։ Կամոդի վրա — հայելի։ Նոյն պատի մոտ մահճակալ։ Պատկերը զարդարված ե արժանագին նկարներով յեվ հին ժամացույցով։ Փրառ Հալմը դեռեվս ջահել կին ե, նստած ե սեղանի մոտ յեվ կարում ե։ Կարլը յեվ նման տեղավորվել են բազմոցում։ Աղօիկը տիկնիկ ե խաղում, իսկ տղան զբաղված ե ընթերցանությամբ։

Կարլ (կարդում ե բարձրաձայն) — ... Յեվ նրանք յեկան գերեզմանի մոտ, և Հիսուսը հրամայեց՝ «Վերցը բեք քարը. աչքերը ուղղեց դեպի յերկինք և բացականչեց. «Հայր, շնորհակալ եմ քեզնից, վոր դու լսեցիր ինձ»։ Ասելով այդ, նա ուժեղ ձայնով կանչեց. «Լազար, յել», և յելավ մեռյալը փաթաթված սպիտակ սավանի մեջ, իսկ դեմքը թաշկինակով կապած։ Յեվ ասեց նրան Հիսուս. «Արձակեք նրա կապանքները և թող գնա»։ (Հոռություն)։

Կարլ (բարձրացնելով գլուխը) — Մայրիկ, Հիսուս Քրիստոս վաղուց ե թողել յերկիրը։

Քրառ Հալմ — Այո, մոտ յերկու հազար տարի։

Կարլ — Յեղ նա այդքան տարուց հետո չի յեկել յեր-  
կիր, մեզ մոտ:

Քրառակ Հալմ — Վոչ, այն որվանից նրան վոչ վոք չի տեսել:  
Կարլ — Ափսոս:

Քրառակ Հալմ — Ինչու:

Կարլ — Գիտես, մայրիկ, այ, յեթե նա այնտեղ լիներ,  
որս հարություն կտար:

Քրառակ Հալմ (հառաջելով) — Բայց նա այստեղ չի յեղել,  
Կարլ, իսկ մեռյալները հանգիստ են ուզում և չեն  
սիրում, յերբ նրանց արթնացնում են: Նրանք իրենց  
շատ թեթև են զգում հողի տակ: (Զեռքով աշքերն ե  
ուրբում: Մի փոքր ընդմիջումից հետո նորից խոսում  
ե հանգիստ) Կարլ, վերջացրի՞ր դասերդ:

Կարլ — Այո, մայրիկ:

Քրառակ Հալմ — Ուրեմն դուք մի ժամով կարող եք զը-  
նալ ֆըոյլայն Շվարցի մոտ, յես պետք ե այս պատ-  
վերը տանեմ հանձնելու:

Կարլ — Լավ, մայրիկ:

Եմմա (նույնպես վեր թոշելով) — Ա՛հ, այնտեղ շատ ուրախ  
ե. գիտես, մայրիկ, մեզ այնտեղ միշտ մի վորեն  
բան են տալիս:

Քրառակ Հալմ (ժպտալով) — Դեհ, իհարկե, ձեզ համար այդ  
ամենակարեռն ե: Այնպես չե: Դեհ, ձեզ տեսնեմ,  
ձեզ այնտեղ կարգին պահեք:

Կարլ — Լավ (յերեխաները զնում են):

## ՏԵՍԻԼ 2.

(Քրառակ Հալմը պատվերը դնում ե կապոցում):

Քրառակ Շաղլեր (տարիքով կին ե, խոհանոցի գոզնոցը կա-  
պած՝ արագ մտնում ե սենյակ. յեղ խոսում ե կատա-  
ղած) — Վոչ, սա արդեն անտանելի յե դառնում: Ահա  
քեզ ստոր, անամոթ կին: Յերեխակայեցեք, Ֆրառն  
Հալմ, յես նոր կռվեցի այդ կարմրամազ Գուբերշի  
հետ, աղբի պատճառով, և, յերեխակայիր, նա հա-  
մարձակվեց ինձ անվանել կեղծավոր սրբուհի, կա-

վաս, հարբեցող և վողորմություններով ապրող...  
Յես նրան դեռ այդ կիշեցնեմ, յես նրան դատի  
կտամ, այո, դատի:

Ֆրառն Հալմ—Յես յենթադրում եմ, վոր Ֆրառն Գու-  
բերշը այդ բոլորը կատակով ե ասել, համենայն  
դեպս ասել ե բարկության միջոցին:

Քրառն ՇՏ.—Բոլորովին վոչ, նա այդ բոլորն ասաց նա-  
խանձից դրդված, այո, միայն նախանձից, վորով  
հետև յես նրանից լավ եմ ապրում: Միթե յես մե-  
ղավոր եմ, վոր այդ բոցե աչքերով կարմրամագ  
Գուբերշն ունի յոթ յերեխա, վորոնք կպած են դա-  
տարկ սեղանին և վորոնց ստամոքսներում այնպիսի  
աղմուկ ե տիրում, կարծես թե մկներն են վազվզում  
ծվծվալով:

Քրառն Հալմ—Հերիք ե, Ֆրառն Շտադլեր:

Քրառն ՇՏԱԴ.—Խնդրեմ բերանս մի փակեք: Յես մեղք  
չունեմ, յեթե այդ հանդուգն քավթառը վոչ վոքի  
հետ չի կարողանում հաշտ ապրել: Նա դեռ կզգա  
իր ասածները և մեղա կզա... Դեհ, դուք ի՞նչպես  
եք, Ֆրառն Հալմ: Դուք դարձյալ լաց եք յեղել, ձեր  
կարմիր աչքերը վկայում են: Յեթե այդպես շա-  
րունակվի, դուք կքոռանաք արտասվելուց: (Բարե-  
կամաբար առնում ե Հալմի ձեռքը, միյեվնույն միջոցին  
զննում ե ամբողջ սենյակը): Միթե դուք դեռևս ձեր  
ամուսնուն չեք կարողանում մոռանալ:

Քրառն Հալմ—Մոռանալ: Միթե կարելի յե նման ամուս-  
նուն մոռանալ: Յեզ միենույն ժամանակ զավակ-  
ների հոգսը... Ի՞նչ ե նրանց սպասում:

Քրառն ՇՏԱԴ.—Մինչև այժմ ավելի լավ գործ  
չգտաք: Նման աշխատանքով ամեն որ ճաշել ան-  
դամ չի կարելի:

Քրառն Հալմ—Այո, այդ ճիշտ ե: Որական մի մարկ և  
կես հազիվ ես աշխատում: յեթե այն ել ամեն որ  
լինի աշխատանք, ելի վոչինչ: Ժամանակին...

Քրառն ՇՏ.—(ընդմիջելով)—Լավ... Դուք այդպես եք կար-

ծում։ Դեհ, վոչ, թանգագին ֆրառւ Հալմ, այդ շատ  
կասկածելի յե։ Ոգտվեցեք, հեռուները մի ման  
գաք... (գրգոիչ) Նման գեղեցիկ ջահել կնոջ բախտը  
հենց իր ձեռքումն ե,—հարկավոր, ե միայն ցանկալ...  
Դուք ստիպված չեք լինի մի յերկու ֆեննիգի հա-  
մար մեջք ծռել և հարուստ գործարանատիրոջ գըր-  
պանի համար տանջվել։ (Չորս կողմ նայելով) Յեղեք  
խելացի, յես գիտեմ մի լավ և ազնիվ պարոն,  
վորին դուք դուր եք յեկել, և վորը ձեզ կտա մի-  
ջոց հանգիստ ապրեյու—հարկավոր ե միայն մի  
փոքր սիրալիր լինել։ Զե՞ վոր դուք հասկանում  
եք... յես կարող եմ նրան ասել... ուղարկել այս-  
տեղ...

Ֆրառւ Հալմ (վըդովված յեվ խիստ) — Ֆրառւ Շտադլեր,  
դուք ինձ հում տեղն եք ընդունում։

Ֆրառւ Շտադ. (յետ գնալով) — Ի՞նչ պատահեց ձեզ, չե  
վոր իմ առաջարկիս մեջ վոչ մի կեղտոտ բա չկա-  
հազարավոր կանայք և աղջկերք այդպես են ապ-  
րում. մինչև անգամ այստեղ, մեր տան մեջ։ Յես  
ընավ մտադրություն չունեյի ձեզ վիրավորելու, և  
վոչ մի ցանկություն, ֆրառւ Հալմ։

Ֆրառւ Հալմ — Նման առաջարկությունները վիրավորա-  
կան են։ Յես խնդրում եմ այլևս չառաջարկել ինձ  
նման ստոր միջոցներ։

Ֆրառւ ՇՏ. — Յես վատ մտադրությամբ չասացի, ֆրառւ  
Հալմ, հավատացնում եմ ձեզ։ Դուք, իհարկե, ա-  
մենաազնիվ կին եք, յես այդ գիտեմ։ Զեմ կարողա-  
նում տեսնել ձեր ծով կարիքները։ Իսկ կարիքը  
մարդու շատ բանի յե մղում։ Յես մտածում եյի  
յերեխանց..».

Ք. Հալմ (ընդմիջում ե նրան վճռականորեն) Այս, յերե-  
խանց, միմիայն յերեխանց համար, յերբեք, վոչ մի  
դեպքում։

Ֆր. Շտադ. — Ինչպես կամենաք, միայն խնդրում եմ այդ  
մասին վոչ վոքի վոչ մի խոսք չասեք, թե չե, զի-

- տեք, ելի՛, լվից ուղարկածնեն. այ, հենց այդ կարմրամազ Գուբերնը:
- Ֆ. Հալմ (սառն) — Շատախոսել — իմ բնավորությունից դուքս եւ:
- Փ. ՇՏ. — Այդ ինձ հայտնի յեւ, ֆրառւ հալմ, հայտնի յեւ: Դուք մըջունին անգամ չեք նեղացնիլ, — դուք անշափ բարի սիրտ ունեք: Բայց դուք ներեցեք իմ անկեղծ լինելը: Ազնվությունը և բարությունը մեր ժամանակներում զին չունեն և դրանցով մի լավ բանի չես հանգի: Յեթե մեր ժամանակներում չխռուարհվես, առաջ չես գնալ: Յեզ հարկավոր ե շարունակ քամու հոսանքով գնալ: Իհարկե, սկզբներում պետք ե քեզ ազնիվ, մաքուր ձևացնես, — առանց այդ հաջողություն չես ունենալ: Գիտեք, ֆրառւ հալմ (յես այս կարող եմ ձեզ ասել, վորովհետեւ դուք վոչ վոքի չեք ասիլ). զորորինակ, յես իմ հարբեցող ամուսնու մահից հետո հազարապատիկ լավ եմ ապրում: Աղքատների ոգնության կոմիտեն վճարում ե բնակարանիս վարձը, իսկ հագուստեղենը, վանելիքը, ուտելիքը տալիս ե բարեգործական ընկերությունը: Այս: Ամենագլխավորը, այս, գլխավորապես հարկավոր ե բարեկամական հարաբերությունների մեջ մտնել հոգեորականության հետ և շարունակ յեկեղեցի հաճախել — չե վոր քահանան ամեն տեղ մեծ ազդեցություն ունի և կարող ե ամեն բան անել, յեթե միայն կամենա: Իրավ, ինձ ամենքը նախանձում են, իսկ կարմրամազ Գուբերնը...
- Ֆ. Հալմ (ընդմիջելով) — Այս, այս, այդ բոլորը լավ, բայց յես կեղծել չգիտեմ:
- Ֆր. ՇՏ. — Ափսոս, դուք այդպես հեռու չեք գնալ:
- Ֆր Հալմ. — Յես միայն կարողանամ ազնվորեն ապրուստս հայթայթել, այդ ել բավական ե... յես ուշացա, պետք ե տանեմ պատվերը... Արդյոք չեք լինի բարի վերցնել սենյակիս բանալին, վորպեսզի տաք յերե-

Խաներին, յեթենըանք ինձանից շուտ վերադառնան:  
(Ուղղելով մազերը հայելու առաջ):

Ձր. ՇՏ.—Ռւրախությամբ: Դուք գիտեք, վոր ինձ կարելի  
յե հավատալ:

Ք. Հալմ—Կարծում եմ, այլապես յես ձեզ բանալին չեյի  
տա: (Վերցնում ե կապոցը, յերկուսը միասին զնում են.  
Քրառու Հալմը դրսից կողպում ե դուռը, բայդ շուտով  
վերադառնում ե): Պահարանը մոռացա կողպել: (Կող-  
պում ե պահարանը, բանալին գրպանն ե դնում: Գնում ե,  
կողպելով դուռը դրսից):

### ՏԵՍԻԼ 3.

(Մենյակի դուռը բացվում ե):

Ձր. ՇՏ. (զգուշությամբ մտնում ե) — Դեհ, թռչնակը թռավ...  
Բունը դատարկ ե: (Նայում ե այս-այն կողմ յեվ մի  
բանի իրերին ծեռք տալիս): Այո, այնքան ել ճոխ չե  
այստեղ: Աղքատ ե, շատ աղքատ ե: Յեվ ահա, այս-  
պիսի քննձրութը քիթը վեր ե ցցում և մեզ նման-  
ների վրա վերելից ե նայում: Ինչ արած, այդպես  
ե. ինչքան վոր մարդն աղքատ ե լինում, այնքան  
իր մասին մեծ կարծիք ունի, (Աշխատում ե պա-  
հարանը բացել): Տեսեք, տեսեք, կողոպտել ե այս  
փթած պահարանը: Չի հավատում... Ինչ կարծիք  
ունի՝ իմ մասին... Կողպելու բան ե գտել...  
միքանի պատառուտած սպիտակեղեն և գուցե նամակ-  
ներ, վորոնց ընթերցումը վոչվոքի չե թույլատըր-  
վում... Իրոք յերեկի ունի հիմունք կողպելու.  
յերեկակայում եմ, թե... (ականջ ե դնում) Մարդ ե  
գալիս: Հուսով եմ, վոր նա չե: Այդ այնքան ել  
հաճելի չեր լինի: (Բաղխում են): Վոչ, փառք աստծուն  
նա չե: Այ թե ոյին կլիներ:

## ՏԵՍԻԼ 4.

Պատօր Դաններ (սեվ ֆարաջայով, ակնոցներով)։ — Բարեկամութեան ձեզ։

Ֆր. ՇՏ. (անհարմար զգալով վողջունում ե)։ — Բարի որ, պարոն պաստոր։ Ուրախացրիք ինձ (մեկնում ե ծեռքը)։

Պատ. — Միթե դուք այստեղ եք բնակվում, ֆրառւ Շտադլեր։ Յես յենթադրում եյի, վոր այս սենյակը ֆրառւ հալմինն ե։

Ֆր. ՇՏ. — Այո, պարոն պաստոր, այս ֆրառւ հալմի բնակարանն ե։ Նա գնաց պատվերը հանձնելու, իսկ յես կարգի բերի նրա սենյակը։

Պատ. — Այդ ձեր բնավորության լավ գիծն ե, ֆրառւ Շտադլեր։ Յես ձեզ շարունակ այդպես ել գիտեյի. դուք միշտ պատրաստ եք ոգնել ուրիշներին։ Եհ, ինչպես ենք ապրում։

Ֆր. ՇՏ. — Առ այժմ, փառք աստուծո, լավ, պարոն պաստոր։ Իրավ ե, մարդկանցից շատ վիրավորանքներ եմ ստանում, բայց յես ընդունում եմ բոլորն, իբրև փորձումներ, վոր ուղարկում ե մեզ աստված։

Պատ. — Այդպես ել հարկավոր ե, ֆրառւ Շտադլեր։ Հեղությունը անհրաժեշտ ե, աստված հեզ հոգիների պաշտպանն ե։

Ֆր. ՇՏ. — Արդյոք չեք նստիլ, պարոն պաստոր (աթոռ ե առաջարկում)։

Պատ. (նստելով) — Շնորհակալություն։ Սակայն յես կամենում եյի խոսել հատկապես ֆրառւ հալմի հետ։

Ֆր. ՇՏ. — Նա շուտով կվերադառնա։ Նա գնաց միայն պատվերը հանձնելու։

Պատ. — Այդ դեպքում մենք կարող ենք մի փոքր զրուցել, թանգաղին ֆրառւ Շտադլեր, Արդյոք դուք ես չեք նստի։

Ֆր. ՇՏ. — Յեթե թույլ կտաք, պարոն պաստոր (նստում ե նրա հանդեպ), ինձ համար մեծ բավականություն ե զրուցել պարոն պաստորի հետ։

Պատ. — Ո՛, բավականությունն ամբողջովին իմ կողմն ե:

Ասացեք խնդրեմ, ֆրառւ Շտադլեր, դուք ֆրառւ Հալմին մոտիկից եք ճանաչում, այնպես չե՞:

Ֆր. ՇՏ. — Այո, պարոն պաստոր, ինչպես ինքս ինձ:

Պատ. — Յես լսել եմ, վոր նա այրի յե: Ո՞վ ե նրա ամուսինը:

Ֆր. ՇՏ. — Վարպետ-բանվոր և ամենաթունդ սոցիալ-դեմոկրատ, վոր հերքում եր մեր կրոնը:

Պատ. — Միթե: Այդ շատ ցավալի յե:

Ֆր. ՇՏ. — Յեվ նրա յերկու յերեխաները մինչև այժմ չեն մկրտված, պարոն պաստոր: Տեսեք, թե ինչ մեծ մեղք ե:

Պատ. — Իրոք, այդ անհանդուրժելի յե: Իսկ այդ կինը կարիքի մեջ ե, վատ ե ապրում:

Ֆր. ՇՏ. — Վատ, պարոն պաստոր: Դե ի՞նչ կա զարգանալու, քանի վոր նրանք անաստված են:

Պատ. — Դուք իրավ եք, ֆրառւ Շտադլեր, բայց և այնպես հարկավոր ե դիմել բոլոր միջոցներին, վորպեսզի այդ կնոջը բերենք ճշմարիտ ճանապարհի վրա և արթնացնենք նրա խիղճը: Զե վոր ձեզ հայտնի յե, վոր յերկնքում ուրախանում են ամեն մի կորուսյալի դարձի համար:

Ֆր. ՇՏ. — Դժբախտաբար յերկյուղ եմ կրում, վոր վոչինչ չի ոգնիլ, պարոն պաստոր: Ֆրառւ Հալմը համառ կին ե և անհավատ: Ախ, յես ամեն կերպ համոզում եյի նրան, պարոն պաստոր:

Պատ. — Մի հուսահատվեք, թանգագին ֆրառւ Շտադլեր: Գուցե մեզ հաջողվի դեռ ծռել յերկաթը... Այո, յես քիչ եր մնում մոռանայի: Յես զեկուցեցի բարեգործական կոմիտեյում, պարոն Մեյերին, և դուք մոտոքերս կստանաք բավականին լավ նպաստ:

Ֆր. ՇՏ. (առնելով պաստորի ձեռքը). — Ինչպես բարի յեք դեպի ինձ, պարոն պաստոր, յես անարժան եմ ձեր այդ վերաբերմունքին: Ի սրտե շնորհակալ եմ, պարոն պաստոր:

Պատ. — Խնդրեմ, խնդրեմ, ֆրառւ Շտադլեր, Յես մի-  
այն իմ պարտքն եմ կատարում:

### ՏԵՍԻԼ 5.

Ֆրառւ Հալմ (մտնում ե յեվ զարմացած նայում յեր-  
կուսին). — Բարե ձեզ:

Ֆր. Շտ. (ընդառաջ ե գնում) — Ֆրառւ Հալմ, պարոն պաս-  
տորը վաղուց սպասում ե ձեզ: Յես աշխատեցի  
զբաղեցնել պարոն պաստորին:

Պատ. (վերկենալով յեվ ներկայանալով) — Պաստոր Դան-  
ներ:

Ֆր. Բալմ. — Շատ ուրախ եմ... ֆրառւ Հալմ: Խնդրեմ  
նստեցեք: (Պաստորը յեվ Հալմը նստում են):

Ֆր. Շտ. — Յես չեմ խանգարի, պարոն պաստոր: Թույլ  
տվեք ինձ հեռանալ:

Պատ. — Իսկ սպես ասած. ֆրառւ Շտադլեր...

Ֆր. Շտ. — Յես շատ զբաղված եմ... ձեզ հայտնի յե, վոր  
տան մեջ քիչ հոգսեր չեն լինում նույնիսկ այնպի-  
սի փոքր տան, ինչպիսին իմն ե: Աստված աշխա-  
տանք ե սիրում, պարոն պաստոր:

Պատ. (ըարեկամական). — Յտեսություն, թանգագին ֆր-  
առւ Շտադլեր: (Մեկնում ե նրան ձեռքը: Շտադլերը  
իտնարհ զլուխ ե տալիս յեվ գնում):

### ՏԵՍԻԼ 6.

Պատ. — Դուք վերադարձաք դատարկ ձեռքերնվ, ֆրառւ  
Հալմ:

Ֆ. Հալմ. — Այո, պարոն, այս ըոպեյին գործ չկա: Իրավ.  
Հգիտեմ, թե այժմ ինչ անել:

Պատ. — Մի ընկճվեք հոգով, ֆրառւ Հալմ: Դեռ կգան  
լավ որեր, և նորից գործ կունենաք:

Ֆր. Հալմ. — Գոնե այդ աշխատանքից վորեե ոգուտ  
լինի: Անչափ չնշին վարձատրություն... Յեթե նույն  
իսկ քսան չորս ժամ անընդհատ աշխատես, դարձյալ  
վոշինչ չես ստանալ: Այդ վարձատրությունը թելի

գինն անգամ չի հանում։ Ուրեմն մեզ կը կնակի շահագործում են այդ գործարանատերերը։

Պատ. — Այդ, իհարկե, ծայր անարդարություն ե։ Ի՞նչպես ե կոչվում այդ տնտեսությունը։

Քր. Հալմ. — Մեյեր և ընկերություն — մահուղեղենի գործարան։

Պատ. — Մեյեր և ընկերություն։ Այդ գործարանի տերը Մեյերն ե։

Քր. Հալմ. — Այս։

Պատ. — Բայց չե՞ վոր նա իսկական քրիստոնյա յե, վորը բարեգործական նպատակներով ահագին նվիրաբերություններ ե անում։ Դժվար ե հավատալ։

Քր. Հալմ. — Այնուամենայնիվ այդ այդպես ե։ Ինչպես տեսնում եք, պարոն պաստոր, քրիստոնեյականությունը չե արգելում գործարանատիրոջ քամել իր բ սնվորների վերջին հյութը։

Պատ. — Հմ... հմ... դուք այրի՞ յեք, ֆրառ Հալմ։

Քր. Հալմ. — Այո, պարոն պաստոր. (քմծիծաղ) այն որից, ինչ վախճանվեց իմ ամուսինը։

Պատ. — Ահա թե ինչ, դուք դեռ պահպանել եք յումորը. դուք յերկու յերեխա ունիք, ֆրառ Հալմ։

Քր. Հալմ. — Այո, միայն յերկու յերեխա և ուրիշ վոչինչ։

Պատ. — Այդ շատ քիչ ե, բայց միանույն ժամանակ շատ յերեխաները-իսկական աստուծո նվեր են, ֆրառ Հալմ։

Քր. Հալմ. — Այո, յերբ ունես բավականին միջոց նրանց առանց վշտի մեծացնելու և կրթելու։

Պատ. — Միանգամայն իրավ ե։ Բայց հույս դնելով աստուծո վրա, կարելի յե ամեն ինչի հասնել։ Բարեկի՞րթ են ձեր յերեխաները։

Քր. Հալմ. — Յես գոհ եմ. Չե՞ վոր նրանք շարունակ ինձ մոտ են և ապագայում ել, կցանկայի, վոր նրանք իմ ինամքի ներքո լինեն։ Ճիշտ ե, շատ դժվար ե տանը նստած շահավետ աշխատանք գտնել։

Պատ. — Այո, այո, միանգամայն հավատում եմ։ Իդեպ,

Փրառւ Հալմ, թույլ տվեք հարցնել ձեզ. — դուք  
ավետարանական յեկեղեցուն եք պատկանում:  
Քր. Հալմ. — Յես մկրտված եմ ավետարանական ծեսով,  
պարոն պաստոր:

Պատ. — Այդպես... յերեխաները յերևի նույնպես:

Քր. Հալմ. — Յերեխաները բոլորովին մկրտված չեն.

Պատ. — Մկրտված չեն: (Լուլթյուն): Միթե ձեր ամուսինը  
հեռացավ յեկեղեցուց:

Ֆ. Հալմ. — Այս:

Պատ. — Յեվ վախճանվեց առանց քրիստոնեյական թո-  
ղության. թաղվեց առանց քրիստոնեյական ծիսակա-  
տարության:

Քր. Հալմ. — Իմ ամուսինը վախճանվեց գիտակցությամբ,  
վոր կատարեց իր պարտքը հանդեպ ամբողջ աշ-  
խարհի և իր մոտիկների: Նրան այրեցին...

Պատ. (արագ) — Ան, այս, գիտեմ: (Լուլթյուն): Կնշա-  
նակե՞ ձեր ամուսինը սոցիալ-դեմոկրատների գլխա-  
վորներից մեկն եր:

Ֆ. Հալմ. — Այո:

Պատ. (վրդոված քայլում ե) — Դեհ, այո: Ինչպես յես  
այդ սկզբից չհիշեցի... Հալմ... Այդ ազգը ինձ  
ծանոթ եր: (Նորից նստում ե): Յեվ դուք բաժա-  
նում եք ձեր հանգուցյալ ամուսնու համոզմունք-  
ները, ֆրառւ Հալմ:

Քր. Հալմ. — Լիապես: Դաժան կյանքը հաստատեց ինձ  
նրա մտածելակերպի ճշմարիտ լինելը:

Պատ. — Յերկյուղ եմ կրում, ֆրառւ Հալմ, վոր դուք  
շատ սխալ կարծիք ունեք կյանքի մասին. (Լուլթյուն):  
Յուրաքանչյուր կնոջ հոգու մեջ ապրում ե անջրն-  
ջելիորեն կրոնքի մեծ հավատը: Միթե դուք սի-  
ակ բացառություն եք կազմում: Միթե յերբեք ձեր  
մեջ չի հղացել այն միտքը, վոր այս փորձումը ու-  
ղարկել ե ձեզ ինքը աստված, վորպեսզի դուք դար-  
ձի գաք, և վոր դուք անասելի մեծ անարդա-  
բություն եք դորձում ձեր յերեխաների հանդեպ,

ԴԵԿԵԼՈՎ ՆՐԱՆԳ ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ՍՈւՐԲ ԽՈՐՀՈՒՐԴԻՑ:

ՔՐ. Հալմ. — Զեր հավատը ասում ե՝ վոր աստվածը ստեղծեց ինձ այնպիսին, ինչպիսին կամ, վոր առանց նրա կամքի մարդու գլխից մի մազն անգամ չի ընկնիլ: Ապա ինչու յե նա ինձ այսպես դաժանորեն փորձում: Ինչու յե տանջում անմեղ յերեխաներին: Ինչ վերաբերում ե մկրտության, իմ ամուսինը շարունակ ասում եր՝ — չի կարելի փաթաթել յերեխանց վզին մինչև չափահաս լինելը այս կամ այն հավատը: Կարող ե պատահել, վոր յերբ նրանք կը-հասնեն լիակատար գիտակցության, կսկսեն այլ կերպ մտածել և շնորհակալ չեն լինի իրենց ծնող-ներից: Իսկ չափահաս տարիքում նրանք կարող կը-լինեն համաձայն իրենց համոզմունքների ընտրություն կատարել:

Պատ. — Յես յերբեք համաձայն չեմ ձեր տեսակետի հետ, ֆրառւ Հալմ: Զեր տեսակետը չափից դուքս սերտ կապ ունի սոցիալիստական և հակակրոնական ընթացման հետ: Յես այդ հարցի վերաբերյալ չեմ վիճի ձեզ հետ, բայց գոնե դուք պետք ե վերջապես հասկանաք, թեկուզ դրդված այն պրակտիկ հիմունք-ներից, վորոնք հարկադրում են, նույնիսկ ուշ, մկրտաել ձեր յերեխաներին: Զիսուելով արդեն այն անթիվ անախորժությունների մասին, վորոնք պատահում են չմկրտված յերեխաների հետ ուսումնարաններում և առհասարակ կյանքում, ֆրառւ Հալմ, ձեզ համար անչափ շահավետ ե մկրտել ձեր յերեխաներին թեկուզ հենց այժմս: Այդ դեպքում մեզ կը-հաջողվեր անմիջապես բարելավել ձեր նյութական դրությունը: Գոյություն ունեն հրաշալի հիմնարկություններ, վորոնք իրենց վրա յեն վերցնում յերեխաների դաստիարակությունը և ահա նման հիմնարկներում տեղափորել ձեր յերեխաներին դա կը-լինի ամենանպատակահարմար, և այդպիսով հարցը կատանա իր ամենալավ լուծումը: Բացի դրանից,

մենք ունենք բարեգործական կոմիտեներ, վորոնք ձեզ կտային շոշափելի ոգնություն։ Խորհուրդ եմ տալիս մտածել այդ մասին ինչպես հարկն ե.

Ք. Հալմ. — Ձես չեմ ուզում շեղվել այն բանից, ինչ իմ ամուսինը համարում եր ճշմարիտ ինձ համար նրա կարծիքն անդրդվելի ճշմարտություն ե.

Պատ (իսառ) — Շատ ցավում եմ։ Յեթե դուք նման հայացքով եք նայում իրերի վրա, ապա յես, հակառակ իմ ցանկության, վոչինչ չեմ կարող խոստանալ ձեզ, Փրառւ Հալմ։ Իսկ յեթե դուք փոխեք ձեր մտածելակերպը, վորի մասին յես աղոթում եմ աստղծուն, դուք կարող եք ինձ գտնել։ (Վեր ե կենում, վերցնում ե զլիարկը, փայտը յեվ սառն մեկնում ե նրան ծեռքը)։ Մնաք բարով, Փրառւ Հալմ։

Ք. Հալմ — Գնաք բարով, պարոն պաստոր։ (Պաստորը զնում ե)։

## ՏԵՍԻԼ 7.

Ք. Հալմ — Ահա ներկայացուցիչներ պրակտիկ քրիստոնեյության։ Այն բոլորը, ինչ վոր կրանց աշխարհայացքի սահմաններից դուրս ե և չե համապատասխանում իրենց նեղ քրիստոնեյական ըմբռնումներին, այդ բոլորը նրանց կարծիքով դժոխային հանցագործություն ե։ Ահ, ինչպես աղավաղել են ամեն ինչ։ Մինչև իսկ իրենց մուրացիկ նպաստներով քողարկում են մարդկային արժանավորությունը ստորացնող և ամոթալի պահանջները։ Յեվ առհասարակ նրանց բոլոր ոգնությունները հազիվ կազմեն չնչին ու որինական տոկոսները այն հին չվճարված պարտքի, վոր դրանք պարտահատույց են աշխատավորներին։ (Բաղիսում են դուռը)։ Դեհ, դարձյալ ով կա այնտեղ, մտեք։

ՏԵՍԻԼ 8.

(Մտնում ե Հարտհառուզենը, ելեզանտ պարոն, 50 տարեկան):

Հարտ. — Յ ս դ կ ձեղ Յ ե թ ե չեմ սխալվում — գրառու Հալմն եք:  
Ք. Հալմ — Այո, այդ յես եմ, ինչով կարող եմ ծառայել:  
Հարտ. — Յես Հարտհառուզենն եմ. (Տանում ե գրպանից  
նամակ' լ): Դուք բարեհաճել եք ուղարկել ինձ ձեր  
առաջարկությունը, համաձայն լրագրում տված իմ  
հայտարարության, վոր ուղում եմ մի տնտեսուհի  
(ուշադիր զննելով Փրառու Հալմին):

Ք. Հալմ — Միանգամայն ճիշտ ե: Բարի յեղեք նստել,  
Հարտ. (Նստում ե) — Զեր կյանքի պայմանների հետ յես  
արդեն ծանոթ եմ, համաձայն ձեր նամակի:

Ք. Հալմ (Նստում ե) — Յես ձեզ լսում եմ:

Հարտ. — Ոհա ինչ... Դուք ինձ դուր եք գալիս և յես  
դեմ չեմ ձեզ ընդունել, յեթե միայն զանք համա-  
ձայնության: Անցնենք գործի: Յես առաջարկում  
եմ ձեզ բնակարան — առանձին սենյակ — և ուտելիք,  
Բացի այդ դուք ամսական կստանաք տասն հինգ  
մարկ: Այդ բոլորի դիմաց դուք պարտավոր եք  
բնակարանս մաքուր պահել: Յես պահանջում եմ  
ծայր աստիճան մաքրություն: Դուք կարող եք  
ունենալ, յեթե կամենաք, մասնավոր աշխատանք,  
Համաձայն եք:

Ք. Հալմ (Ուրախացած) — Ինարկե: Դուք միանգամայն  
գոհ կմնաք ինձանից: Պարոն Հարտհառուզեն, յես  
կաշխատեմ վորքան ուժս ների:

Հարտ. (ըարեկամաքար) — Յես հավատում եմ ձեզ: Զեր  
տեսքը բավականին լավ ե: Իսկ ձեր յերեխաները  
բարեկիրթ են:

Ք. Հալմ — Այո, նրանք խելոք են և չեն աղմկում:

Հարտ. — Շատ լավ: Մենք ձեզ հետ կգանք համաձայնու-  
թյան: (Հազիվ իցեցնելով ծայնը) Ի դեպ, դարձյալ  
միքանի խոսք: Ներեցեք անկեղծությանս, սակայն  
յես թյուրիմացություններ չեմ սիրում: Յես, գիտեք,  
ամուրի յեմ: Յես, ուրեմն, կին չունեմ... Դուք ինձ



- հասկանում եք։ Յեթե միայն ձեր կողմից մի վորոշ ցանկություն լինի, դուք կարող եք հրաշալի կարգավորել ձեր գործերը, նմանդեպքերում յես մանրակրկիտ չեմ... (զրկում ե նրան, ըստելով իրանից)։
- Ֆ. Հալմ (արագ ազատվելով նրա գրկից յետ ե քաշվում)՝  
Պարոն... ի՞նչպես եք համարձակվում։ Այդ բանին  
յես յերբեք չեմ համաձայնվիլ։
- Հարտ. — Ի՞նչ շուտ եք վիրավորվում, ֆրառ Հալմ, բայց  
չե՞ վոր դուք կի՞ն եք...։
- Ֆր. Հալմ (ջղայնացած)՝ Այո, կի՞ն եմ, սակայն պատվո  
գգացմունքով։ Զեր պայմանների հետ յես չեմ կարող հաշտվել։
- Հարտ. — Այդ ձեր վերջին խոսքն ե։
- Ֆ. Հալմ — Այո, իմ վերջին խոսքն ե, հեռացեք
- Հարտ. — Ի՞նչպես ձեզ հաճելի յե. (վեր ե կենում) յես  
համոզված եմ դեռևս դուք կզղջաք ձեր մերժման  
համար։ Ուրիշները գոհ կլինեյին ոզտվելու առիթից՝  
իրենց ապահովելու նպատակով։
- Ֆ. Հալմ. (ցույց տալով դուռը)՝ Բարի ճանապարհ։
- Հարտ. — Ուրեմն վոչի՞նչ։ Մնաք բարյավ։ (Գնում ե)։

### ՏԵՍԻԼ 9.

- Ֆ. Հալմ. — Ո՛, վորքան խորն ե նստած մարդկանց մեջ  
կեղտոտությունը։ Վորքան ստոր և անխիղճ են,  
Նրանք մարդու մեջ ապրանք են վորոնում, իսկ  
անպաշտպան խեղճ այրի կնոջ վրա հարձակվում են,  
ի՞նչպես վորսկանը վորսի վրա։ Նրանց մարմին ե  
պետք, իսկ հոգին նրանց համար գին չունի։ (Հա-  
լիս ե, հենվելով մահակալին. չոքում ե) Ա՛հ, Գուստավ,  
ի՞նչու թողիր ինձ դառն միայնության մեջ, ի՞նչու  
չվերցրիր ինձ քեզ հետ։ (Ուժեղ դուսն ըախոց։ Վեր  
ե կենում։) Դարձյալ ով պետք ե լինի։ Համենայն  
դեպս լավ բան չի լինի։ (Թաշկինակով սրբում ե աշ-  
քերը։ Նորից ըախում են ավելի ուժեղ)։ Մտեք։

### ՏԵՍԻԼ 10.

- Վայտման (Միջին տարիքով, ինքնազո՞ւ դեսքով, արա-  
գլնթաց մտնում ե)՝ Բարե ձեզ, ֆրառ Հալմ, դուք,

իւարկե, հասկանում եք, թե ինչու եմ յեկել։ (Փրառ-  
չալմը զլխով նշան ե անում) Այս, այս, դուք միայն  
դուխն եք շարժում, սակայն դրանից ոգուտ չկա.  
Դուք պարտական եք բնակարանի յերկու ամսվա  
վարձը վճարել, իսկ այսորն արդեն յերբորդ ամսվա  
կեսն եւ Դուք խոստացաք վճարել բոլորն ամսի մեկին,  
բայց դարձյալ չկատարեցիք ձեր տված խոստումը։  
Վերջապես յերբ եք վճարելու։

Յ. Հալմ. — Դժբախտաբար, պարոն Վայտման, յես հնա-  
րա լորություն չունեցա մինչև որս կատարել իմ  
պարտականությունը։ Զեզ հայտնի յե, վոր նախ  
այսուսնու հիվանդությունը, հետո նրա դիակն այ-  
րելու ծախսերն ինձ առանց կոպեկի թողին։ Առայժմ  
չկարողացա գտնել մի արդյունավետ աշխատանք,  
սակայն համոզված յեղեք, վոր ինձ վրա ձեր մի ֆեն-  
նիգն ել չի կորչի։ Յեղեք բարի, համբերել դար-  
ձյալ միքանի որ։

Վայս. (բարձր յեվ ցինիկ) — Հին յելու ե, շատ հին։ Դա-  
տարկ խոստումներ և ուրիշ վոչինչ։ Դրանցով յես  
ինձ համար մուշտակ չեմ կարի։ (Բաղխում են դուռը,  
սակայն վոչ մեկը չի լսում բաղխումը)։

### ՏԵՍԻԼ 11.

(Ծվարց — բանվոր, մոտ յերեսունինգ տարեկան,  
ախորժելի դեմքով. մտնում ե հանգիստ յեվ աննկա-  
տելի Վայտմանից յեվ Հալմից, վորոնք կանգնած են  
մեջքով դեպի նա։ Մնում ե դռների մոտ յեվ ակամա-  
լում նրանց խոսակցությունը)։

Վայտման (շարունակելով) — Յես կամենում եմ ստանալ  
փողերս անմիջապես, հենց այժմ։ Իսկ յեթե դուք  
այդ անկարող եք կամ չեք կամենում, ապա յես  
ձեզ դատարանով դուրս կշպրտեմ։ Դուք հասկա-  
նում եք ինձ։ Այստեղ յեղած կահկարասիքը յես  
կպահեմ ինձ մոտ վորպես գրավական։ Խնդրեմ լավ  
հիշեք այս բոլորը։ Դուք այստեղից վոչինչ չեք կա-  
րող տունել առանց իմ թույլտվության։ Ինձ հայտնի

յեւ արդեն, վոր գաղտնի ինձանից, ծախել եք մեծ  
արկղը և անկողինը։ Գիտե՞ք, դրա համար որենքով  
դուք կենթարկվեք պատասխանատվության։  
Ֆր. Հալմ (հեկեկալով).—Ո՛, մի լինեք այդպես խիստ;  
Նվարդ (առաջ զալով՝ դիմում ե Վայտմանին).—Լսեցեք,  
սիրելիս, զսպեք ձեր բարկությունը, ապա թե վոչ  
դուք գործ կունենաք ինձ հետ։  
Վայս. — Իսկ դուք ով եք։ Յես ձեզ հետ չեմ խոսում։  
Նվարդ — Յեվ լավ եք անում, (Փրառ Հալմին) Մի ան-  
հանգստանաք, ֆրառ Հալմ, — յես կարգի կղնեմ  
գործը։ Վորքան եք պարտ այս մարդուն։  
Ֆ. Հալմ — Ե՞ս, պաշոն Շվարց, յերկու ամսվա — յե-  
րեսուն մարկ։ Բայց յես այս ըոպեյին փող չունեմ։  
Նվարդ (հանելով քսակը) — Չնչին գումարի համար սա  
թույլ ե տալիս նման անամոթություն։ (Փողը ու-  
նում ե սեղանի վրա) Ահա ձեզ — ստացեք ձեր փողը  
և թող նա ձեզ յերջանկություն բերի։  
Վայս. (ուրախանալով պահում ե փողը), — Այժմ մենք  
քվիտ... Ո, դուք չգիտեք, թե մեր ժամանակնե-  
րում ինչ դժվար ե փող ձեռք բերել և թե ինչպես  
խաբում են մեզ նմաններին։ Ահա իմ այս առւնը  
շատ չնչին յեկամուտ ե բերում։ Տունը կապիտալի  
վատ շենքն ե։ Միայն հինգ տոկոսն ե բերում և  
վոչ մի կոպեկ ավելի։ Յեվ ահա, յեթե նման պայ-  
մաններում բարկանում ես, ներելի յե։ Իսկ ընդ-  
հանրապես, յես դեմ չեմ ֆրառ Հալմին, վոչ, բո-  
լորովին վոչ, ընդհակառակը։  
Նվարդ — Դես, լավ։ Թողեղ ձեզ ձեր այդ տհաճ ճար-  
տարախոսությունը։ Յես ձեզ արդեն լավ ճանաչեցի։  
Վայս. (պատրասելով զնալու). — Մի նեղանաք ինձ վրա։  
Յեղեք առողջ։  
Նվարդ — Սպասեցեք։ Դուք նախ և առաջ ստորագրու-  
թյուն տվեք փող ստանալու համար, ապա կա-  
լող եք գնալ։  
Վայս. — Ահ, այս, յես բոլորովին մոռացա այդ մասին  
(ստորագրում ե ֆրառ Հալմի տված թղթի վրա)։  
Նվարդ — Հետեւյալ ամսին ընակարանը կարող եք ա-  
ղատ հսմարել, այնպես չե՞, ֆրառ Հալմ։

Փր. Հալմ — Այու, Շվարց։ Յես չեյի ցանկանա այստեղ մի ավելորդ որ մնալ։

Վայս. — Ինչ արած... Զեր կամքն ե... Թեև շատ, շատ ափսոս... (Շվարցը ըստում է նրան դուռ) Յես այդ ձեզ չեմ թույլ տա։ Ինչպես, վոնդել ինձ իմ սեփական տանից։ Դա չափից դուրս խիստ ե։

Շվարց — Բնակարանը պատկանում է ֆրառւ Հալմին—նա վճարեց։ Հասկացաք (Վայտսանը հեռանում է հայոյինով)։

### ՏԵՍԻԼ 12.

Շվարց (ծիծաղելով դիմում ե Հալմին). — Դեհ, ինձ թվում ե, վոր այդ թռչնակի հետ մենք վերջացրինք։

Փր. Հալմ (վերցնելով Շվարցի յերկու ձեռքը). — Ինչպես հայտնեմ իմ շնորհակալությունը, թանգագին Շվարց։ Դուք դժվար ըոպեյին հասաք, վորպես մի բարի հրեշտակ։ Սակայն դուք ստիպված կլինեք սպասել դրամներն ստանալուն, — յես դժվար թե կարողանամ շուտով վերադարձնել։

Շվարց. — Յեվ հարկավոր չե, ֆրառւ Հալմ։ Այդ մասին զուր մի տանջեք ձեզ — վճարված փողերը ձերն են, ինչպես և սրանք։ (Դնում ե սեղանի վրա արծաթե դրամի կույտ) Լսդամենը յոթանասուն մարկ։

Փր. Հալմ (զարմացած). — Այդ փողերն ինձ են պատկանում։

Շվարց. — Այու, ինարկե։ Յես հավաքեցի ընկերների միջև և, ինչպես տեսնում եք, վոչ վոք ժլատ չի գըտնը վել։ Բանվորները պետք ե համերաշխ լինեն, ֆրառւ Հալմ։ Նրանք չեն մոռացել ձեր ամուսնու արածները նրանց համար։ Յեվ մեր պարտականությունն ե մի փոքր հոգս տանել նրա մոտիների համար։ Ինարկե, վորքան մեր ուժերը կպատեն։ Զե վոր մենք ինքներս աղքատ մարդիկ ենք։ Սկզբնական դժվարություններին այդ գումարը ձեզ մի փոքր կոգնե։

Փր. Հալմ (նստում ե աթոռի վրա). — Ինչպես անսպասելի յեր այս բոլորը։ Յեվ հենց այն միջոցին, յերբ անշափ ծանր եր... թույլ տվեք մի փոքր մտքերս հավաքելու, Շվարց։

Շվարց (նոյնպես նստում ե յեվ ըստում ե նրա ձեռքը). —

Խեղճ կին, ինչպես տանջվում եք։ Այս, մարդիկ անխիղճ են և անխնա, յերբ հարցը վերաբերում է նրանց գրպանին։ Ներկա հասարակությունն այնպես ե, վոր մարդը մարդու վրա պետք ե հարձակվի այնպես, ինչպես գաղանը գաղանի վրա... Այժմ ի՞նչ եք մտածում անել։ Արդյոք ունե՞ք լավ գործ։

Ֆր. Հալմ. (հառաշելով). — Իժբախտաբար վոչ։ Յես շատերին եմդիմել, բայց և վոչ մի արդյունավետ գործ։ Յեվինձ համար դժվար ե գտնել հարմարաշխատանք, վորովհետև յես չեմ ուզում զավակներիցս բաժանվել։ Կար անելով վոչինչ չի դուրս գալիս. վատ ե վճարվում և պատվերներն ել խիստ սակավ են։

Եվարց (լուրջ). — Փրառւ Հալմ, կարող եմ ազնիվ առաջարկություն անել ձեզ։

Ֆր. Հալմ. — Իհարկե... ինչու չե, Շվարց։ Յես գիտեմ, վոր դուք լինելով իմ ամուսնու ամենալավ բարեկամը, մեզ միայն բարին կցանկաք։

Եվարց (զլխով դրական նշան ե անում). — Յես կատարում եմ միայն իմ պարտքը... Յես այցելեցի ձեր ամուսնուն իր մահից միքանի որ առաջ։ Այդ միջոցին դուք, տանը չեյիք, — և նա վերցրեց ինձանից խոստում, վոր յես հոգս կտանեմ ձեր և ձեր յերեխաների մասին։ (Փրառւ Հալմը մեղմ լալիս ե)։ Թանգագին ֆրառւ Հալմ, հանգստացեք։

Ֆր. Հալմ. — Ինչ ազնիվ մարդ եք։ Յես հանգիստ եմ... (Սրբում ե աչքերը թաշկինակով)։

Եվարց. — Յեվ ահա յես հայտնեցի հիվանդին մի ծրագիր, վորի առթիվ ջերմ սեղմեց ձեռքս։ (Լոռվթյուն)։

Ֆր. Հալմ. — Ի՞նչ ծրագիր, Շվարց։

Եվարց. — Միայն սխալ չմեկնեք իմ ասածները, ֆրառւ Հալմ. Իմ նպատակները մաքուր են. յես յերբեք չեմ ունեցել հետին մտքեր։ Բայց ինձ համար շատ դժվար ե ասել ձեզ այդ մասին...»

Ֆր. Հալմ. — Ասացեք, Շվարց. (հաստատ) յես կհասկանամ ձեզ ինչպես հարկն ե։

Եվարց — Դուք ինձ քաջություն եք ներշնչում. Ձեզ հայտնի յե, ֆրառւ Հալմ, յես չեյի կարողանում վորոշել ամուսնանալ և ապրում եյի քրոջս հետ մի ասին։

Ֆր. Հալմ. — Գիտեմ... Բայց ձեզ նման մարդը կարող եր ունենալ լավ կին — ինչու մասցիք ամուրի։

**Եվարց** (ղժվարությամբ). — Այդ մասին—անձամբ դուք.

այդ մասին չպետք ե հարցնելիք ինձ:

Քր. Հալմ (շփոթված). — Ինչու (լոռություն):

**Եվարց.** — Այս: Հեշեցեք, յերբ ձեր ամուսինը կամենում եր ձեզ հետ նշանվել... Յես ահա այդ ժամանակ ծառթացա ձեզ հետ և, — ներեցեք ինձ—սիրեցի ձեզ:

(Փրառ Հալմը լուր սեղմում ե նրա ձեռքը):

**Եվարց.** — Զե՞ վոր, յերբ դուք հարսնացու եյիք, յես վորպես ձեր ամուսնու բարեկամը հաճախ լինում եյի ձեր շըջանում և ձեր անհատական առավելությունները չեյին կարող չթողնել ինձ վրա խոր տըպավորություն: Սակայն ձեր ամուսինը գործնական և ազնիվ մարդ եր... Յես թագցը իմ զգացմունքը հոգուս խորքում և յերբեք վոչ վոքին չեմ ասել այդ մասին: Միայն, յերբ վերջին անգամ այցելեցի ձեր մեռնող ամուսնուն՝ նրա համառհարցմունքներին ստիպված յեղա բացել սիրտո նրա առաջ: Նա, պետք ե յենթադրել, վոր և առաջ կասկածում եր:

Քր. Հալմ (շփոթված). — Յեվ չնայած այդ բանին, նա այնուամենայնիվ մեր մասին հոգատարությունը ձեզ հանձնեց:

**Եվարց.** — Այս, նա գիտեր, վոր յես ազնվաբար կվերաբերվեմ:

Քր. Հալմ. — Այո, այս, գիտեր: Նա շարունակ ձեր մասին լավ կարծիքի յեր:

**Եվարց.** — Թողնենք անցյալը: Մեր առաջ այժմ ավելի լուրջ գործ կա: Խոսքը վերաբերում ե ձեր ապագային (լոռություն): Իմ քույրը, վոր ունի բավականին արդյունավետ հարթուկային արհեստանոց, միքանի շաբաթից ամուսնանում ե—և այն ել շատ հաջող ընտրություն ե: Յես, իհարկե կարող կլինեյի տեղափոխվել նրա մոտ, վորպեսզի մենակ չմնամ, սակայն ինձ համար ծանր կլինի նոր շըջապատում... Յեվ ահա այդ միջոցին յես մտածեցի, Փրառ Հալմ, ձեր մասին: Յեթե այն ըոլորից հետո, ինչ վոր յես ասացի ձեզ, դուք կգտնեք հնարավոր ձեզ վրա վերցնել իմ տընտեսությունը և միենույն ժամանակ շարունակել քըռութեառները և միենույն ժամանակ շարունակել քըռութեառները ձեզ գործի հետ: (Լոռություն): Յես տալիս եմ ձեզ ազնիվ խոսք, վոր շարունակ կհարգեմ ձեր

պատիվը և աղատությունը և քանի դուք կլինեք ինձ  
մոտ՝ յես չեմ վորոնի ձեր մոտիկությունը, յեթե  
միայն դուք չցանկաք այդ օհվ յերեխաների մասին  
յես կհոգամ ինչպես հայր — յեսից դրդված, ֆրառ  
Հալմ. չե՞ վոր իմ հանգստի ժամերին յերեխաները  
ինձ կղբաղեցնեն: (Վերկենալով): Դեհ, վերջապես,  
թոթափեցի վրայից ծանր բեռը. այդ ինձ հեշտ  
չեր: Մի բարկանաք ինձ վրա, ֆրառ Հալմ, յես  
դնում եմ, դուք մի լավ մտածեցեք: Յես վաղը կզամ  
պատասխանի, բայց այսպես թե այնպես յես ուրախ  
կլինեմ ուժերիս չափ ձեզ ոգնել... Ա՛, ահա դոլիս  
են ձեր յերեխաները:

### ՏԵՍԻԼ 13.

(Կարլը յեվ Եմման ներս են վազում սենյակյեվ ընկ-  
նում Շվարցի զիրկը):

Կարլ. — Մենք ֆրոյլայն Լինայի մոտ եյինք, պարոն  
Շվարց: Ո՞ս, այնտեղ շատ ուրախ եր: Վանդակում  
ծիտը շարունակ յերգում եր. և ահա, յես ստացա  
շոկոլադ (ցույց ե տալիս շոկոլադ):

Եմմա. — Յես ել ստացա շոկոլադ: Տեսեք, պարոն Շվարց  
(Նույնպես ցույց ե տալիս շոկոլադ):

Շվարց (կատակով). — Իմ քույրը ձեզ շատ ե յերես տալիս,  
բալիկներ, այդ լավ չե:


Ֆր. Հալմ. (վեր ե կենում յեվ մոտենում ե յերեխաներին). —  
Յերեխաներ, կցանկայի՞ք տեղափոխվել պարոն Շվ-  
արցի մոտ:

Կարլ յեվ Եմմա (հիացած). — Իհարկե, մայրիկ (Նրանք թոշկո-  
տում են յերկուսի շուրջը, ապա զրկում են Շվարցին):

Ֆր. Հալմ (ժպտակով, զզացված). — Իուք լսո՞ւմ եք, Շվարց,  
յերեխաները լուծեցին հարցը: Յեվ յեթե դուք ձեր  
մտադրությունը չեք փոխել, մենք կտեղափոխվենք  
ձեզ մոտ:

Կարլ. — Մայրիկ, մենք հենց այժմ կերթանք այնտեղ:  
Շվարց (ծիծաղում ե, զրկելով յերեխաներին). — Շնոր-  
հակալություն, ֆրառ Հալմ: Այ ուրախություն  
կլինի. այ, այժմ կյանք կլինի... Մենք այժմ միա-  
սին կմղենք գոյության կոիվը և մեզ համար այդ  
հեշտ կլինի:

Վարագույր.



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220038470

[104]

A II  
38470